ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Հնաբերդ համայնք
098025050, hnaberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2021թվականի N 19

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հնաբերդ համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 06 արտահերթ նիստի օրակարգը.

1.Հնաբերդ համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Հնաբերդ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (զոտնորման նախագիծը) հաստատելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
2. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
3. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԼԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

04200358

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ.098025050. hnaberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25** մայիսի 2021 թվականի N 20-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ մասի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել համայնքի ղեկավարին Հնաբերդ համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ Ծախսային մաս

1. Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Վարչական բյուջէի պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից 100.0 հ. դ. տեղափոխել 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի վրա՝ համայնքապետ-տարանի փաստաթղթերի արխիվացումը կազմակերպելու նպատակով:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ Ծախսային մաս

1. Ֆոնդային բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5121 (Տրանսպորտային սարքավորումներ) հոդվածից 150.0 հ. դ. տեղափոխել 08.02.03.52 (Մշակույթի տների հիմնանորոգում և վերակառուցում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի վրա՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման համար:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

2.ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

3.ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Հնաբերդ համայնք
հեռ. 098025050, էլ.հասցե hnaberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2021 թվականի N 21

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 6 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով,ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

**1.**Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Հնաբերդ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) համաձայն հավելվածի:

2.Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան,ըստ որում.

Հնաբերդ

| Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի | Առկա նպատակային և գործառնական | Մակերեսը | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական | Մակերեսը |

| վրա | նշանակությունը | (հա) | նշանակությունը | (հա) |
|---|---|---|---|---|
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթ հողերի | | | |
| | | | Բնակավայրերի | |
| ԷԲ-1 | Կոմունալ ենթկառուցվածքների | 0.18 | Հասարակական կառուցապատում | 0.18 |
| Ընդհանուր | | | 0.18 | |
| Բնակավայրերի հողերից | | | | |
| | | | Բնակավայրերի | |
| ԲԲ-1 | Հասարակական կառուցապատում | 0.022 | Բնակելի կառուցապատման (տնամերձ կառուցապատում) | 0.022 |
| Ընդհանուր | | | 0.022 | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից | | | |
| | | | Բնակավայրերի | |
| ԳԲ-1 | Վարելահող | 0.05 | Բնակելի կառուցապատման (տնամերձ կառուցապատում) | 0.05 |
| ԳԲ-2 | Վարելահող | 0.55 | Բնակելի կառուցապատման (տնամերձ կառուցապատում) | 0.55 |
| ԳԲ-3 | Վարելահող | 0.26 | Ընդհանուր օգտագործման | 0.26 |
| ԳԲ-4 | Վարելահող | 0.35 | Բնակելի կառուցապատման (տնամերձ կառուցապատում) | 0.35 |
| ԳԲ-5 | Վարելահող | 0.56 | Բնակելի կառուցապատման (տնամերձ կառուցապատում) | 0.56 |
| Ընդհանուր | | | 1.77 | |
| | Ջրային հողերից | | | |
| | | | Բնակավայրերի | |
| ՋԲ-12 | Ջրանցքներ | 0.00206 | Հասարակական կառուցապատման | 0.00206 |
| Ընդհանուր | | | 0.00206 | |
| | | | Գյուղատնտեսական նշանակության հողեր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՋԲ-13 | *Ջրանցքներ* | 0.00575 | *Այլ հողատեսքեր* | 0.00575 |
| | *Ընդհանուր* | 0.00575 | | |
| | Հատուկ պահպանվող օբյեկտների հողերից | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմ. ենթ.հողեր | |
| ՀԷ-1 | *Պատմական և մշակութային (գերեզմանոցներ)* | 0.781 | *Կոմունալ ենթ.(գերեզմանոցներ)* | 0.781 |
| | *Ընդհանուր* | 0.781 | | |
| Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից | | Բնակավայրերի | |
| ԳԲ-6 | *Վարելահող* | 0.26 | *Ընդհանուր օգտագործման* | 0.26 |
| ԳԲ-7 | *Բազմամյա տնկարկներ (պտղատու այգիներ)* | 0.01 | *Հասարակական կառուցապատում* | 0.01 |
| ԳԲ-8 | *Բազմամյա տնկարկներ (պտղատու այգիներ)* | 0.1 | *Հասարակական կառուցապատում* | 0.1 |
| | *Ընդհանուր* | 0.37 | | |
| Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից | | Բնակավայրերի | |
| ԳԲ-9 | *Այլ հողատեսքեր* | 0.016 | *Հասարակական կառուցապատում* | 0.016 |
| ԳԲ-10 | *Բազմամյա տնկարկներ (պտղատու այգիներ)* | 0.11 | *Հասարակական կառուցապատում* | 0.11 |
| ԳԲ-11 | *Բազմամյա տնկարկներ (պտղատու այգիներ)* | 0.12 | *Հասարակական կառուցապատում* | 0.12 |
| | *Ընդհանուր* | 0.246 | | |

3.Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

5.Ուժը կորցրած ճանաչել Հնաբերդ համայնքի ավագանու 15.05.2020 թվականի թիվ 13 որոշումը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ